ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Համազգեստ 2 (լրակազմ)	Համազգեստ 2 (լրակազմ)	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Բաճկոն՝ մուգ կապույտ, (44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, երկարաթև, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Աջ վրադիր գրպանի կափույրի վերևի մասում ամրացվում է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» անվանումը, իսկ ձախ մասում՝ պրոբացիայի

						ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 10 սմ ներքև՝ ամրացվում է պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, 9 սմ շառավղով, տաբատ/կիսաշրջազգեստ (նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ) • տաբատ՝ մուգ կապույտ (44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2- տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, երկու կողային գրպաններով: Տաբատը՝ դեպի ձախ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ- օղակով, գոտու վրա 6 հատ գոտեմակ օղակներ են, հետնամասում ներկարված, մեկ կոճակով կոճկվող գրպան, կիսաշրջազգեստ՝ մուգ կապույտ 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն,

					2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով։ շապիկ՝ մուգ կապույտ գույնի կտորից՝ (95-տոկոսանոց բամբակ, 5-տոկոսանոց լայկրա) ±3%: Շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով, կարճաթև, վզամասը մշակված է 2 սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5 մմ լայնության կրկնակի զարդակարով։ Պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, պրոբացիայի ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը և չափսերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից նախապես ներկայացվող հայտով։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					